ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 7938

« 08 » նոյեմբերի 2023թ.

«ԼԵՎԱՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար բազկաթոռների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը.

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **նոյեմբերի 09-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788